

շրջանում այդպէս է ընդունուած : Բայց այդ Նոյիմզարի մասին հաղար ու մի բան են պատմում : Ասում են, նրա անուան հետ կապուած են մի քանի վտանգաւոր գործեր : Արտաշէսը նրա մասին երբէք չի խօսում եւ մեր հարցերին տալիս է անորոշ պատասխաններ : Երբէկ նա մինչեւ անգամ կատաղեց, երբ մայրիկս դարձեալ փորձեց մի բան իմանալ : Գլօրա . Բայց ի՞նչ էք կամենում իմանալ այդ Նոյիմզարի մասին :

Լեւանիս . Նա մօրս սիրտը կասկածներ է գցել : Իսկ ես հէնց առաջին օրից ատեցի այդ աղջկան : Ինձ թւում է, որ նա իւր մտքում հայերին ատում է :

Գլօրա . Այդ ես չեմ նկատել . ընդհակառակը...

Լեւանիս . Օօ, մի հաւատար այդ եկուոր թռչուններին... Նրանք միշտ ատում են մեզ, եւ մենք էլ պէտք է ատենք նրանց : Բայց բանն այս չէ : Ասում են, որ նրա եւ Արտաշէսի մէջ կայ ինչ-որ կապ :

Գլօրա . (Յնգւում է . բայց կարողանում է իրան գսպել) Անշուշտ, գաղափարները կապ :

Լեւանիս . Ա՜հ, ես չեմ հաւատում այդ տեսակ աղջկերանց գաղափարներին : Ո՛չ, Գլօրա, ուրիշ կապի մասին են խօսում, աւելի մը տներում...

Գլօրա . (Ոսփ կանգնելով) Աւելի մտերիմ :

Լեւանիս . Կողմնակի անձանցից լսել ենք եւ ամենքը խօսում են, որ Նոյիմզարն Արտաշէսի կիներն է : Այո, ապօրինի . քաղաքական ամուսնութեամբ : Ասում են այդպէս օ՛ք ընդունուած նրանց շրջանում : (Ոսփ է կանգնում) Մայրս հէնց որ այս լսեց, սկսեց մազերը փեռտել :

Գլօրա . (Դուճասուել է եւ զուր ճննում է ուժի վրան պահել) Կի՛նը : (Անը յեմում է ինսպրազկարողի մէջին) Այժմ հանդուգը պարզուած է :

Լեւանիս . Ի՛նչ ուրեմն, դու մի բան գիտե՛ս : Բայց դու զուստուտեցիր, զոգո՛ւմ ես : Ճլօրա, դու սիրում ես իմ եղբորը .

Գլօրա . Ես մի թշուառ էակ եմ : (Բարձրաձայն հեկեկալով, փարաքում է Լեւանիսի պարանոցին) :

Լեւանիս . (Բարձր ձայնով) Սօֆիա...
Սօֆիա . (Վազում է ներս աջ կողմի երկրորդ դռներից) :

Անհեբերիմ . (Շատապով դուրս եմ գալիս
Աշխատող . (աջ կողմի առաջին դռներից ապաւմ մնում))

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Բ

(Կլշրոնալուի)

ՀԻՐԱՆԶԱԿԵ

ՍԻՏՏՈՍ ԱՆԲԱԻ ՍՈՒԳԵՐՈՎ...

Սիրտըս անբաւ սուգերով է բեռնաւոր,
Մինչ հեգնօրէն դեռ պէտք է որ ես ժպտիմ,
Անկարելի արցունքներուն պէտք է որ
Ես փախալիմ հեշտին ցաւը մըտերիմ :

Աւ կ'ընեմ գոյս, — մայր-բընութեան անձնաւոր,
Հըպարտ՝ իմ խուլ, իմ անձանցով սուգերով .
Կ'անցնիմ կեանքէն, հանդարտ քայլովս իմ ամուր,
Աւ դէմքըս ա՛լ չունի սուգ, ցաւ կամ վըրդով :

Երազաւիտ առտունները կը դիտեմ,
Եւ կամ քըրօճ՝ ըստուերալից իրիկուան,
Կամ գիշերուան լոյսերուն հետ դէմ առ դէմ,
Ես կը փնտռեմ հոգւոյս վերջին օթեւան :

ԼԵՏՏԱՀԵՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ